


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ քրոքիւն
պիսիք եւ ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ի Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութի համար 80
Վեցամսեայ 50
Օտար երկիրներ տարեկան Գրանք 25
Վեցամսեայ 14
Թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ է:

Խմբագրութեան ուղղում և
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՔՐՕՆԻԿ

Էջերու մեջում. — Քլարա Վարս. — Երեսփոխանական ժողովրդ. — Աւետարանի կործանումը. — Դարավերջիկ ուխտագնացութիւն:

Ներդրութիւն, եթէ քրոքիւն էջերով կրկնուի: Ապահովագրութեան ծախքը չարժանանալու արդիւնքն է: Երեսփոխանական ժողովրդ. — Աւետարանի կործանումը. — Դարավերջիկ ուխտագնացութիւն:

Անշուշտ իմացած էք թէ Վիեննայի և Բարիլի մէջ բանի մը տարին անգամ մը, գեղեցիկ կիներու մրցում կը կատարուի, որուն հետեւանք թանկագին պարգեւ մը կատանայ գեղեցկագոյն հանդիսացողը:

Որովհետեւ եգիպտացիները զեռ այնքան բազմաթիւութեամբ չեն որ պատկեր գրանան արարչութեան ամենէն հպարտ և ամենէն գեղեցիկ կենդանին: Ինչը, ուստի բայց մը առեւելու համար զգալի յառաջդիմութիւն, այդ խոնարհ և տգեղ անասունն էն սկսան:

Անցեալ ուրբաթ օր անգլուհիներու խումբ մը Հէլուանի մէջ մրցում մը կատարեց Ալեքսանտրոս օթանակներու:

Ճերմակ, սեւ էջեր, գէր ու նիհար էջեր, գլուխներ վեր և պոչերնին վար էջեր, պոչերնին վեր և գլուխնին վար էջեր, պարզեւարաշխութեան հանգիստ մը հրաւիրուած էին այդ օրը Հէլուանի բազիլիոսին հրապարակին վրայ:

Աւանակները երբէք ատանկ ճոխ հանգիստ մը ներկայ չէին գտնուած:

Մտնելներով ծանրաբեռնեալ անգլուհիներ կանայի փախուիկ ձեռքեր, անոնց ունայաբը գգուելէ դատ, շաքարի կտորներով փափկակերութեան կը վարժեցնէին Գրիստոսի նախնորած հեծանքները: Ուրախութիւն մեծ էր գրաստանի այդ երամին մէջ: Անանկներ կային որոնք բարձրաձայն զանգուղիներով, և «վերամարտ ստանալութեամբ» իրենց գոհունակութիւնը կը յայտնէին «անասնոց պաշտպան ընկերութեան» այդ նաղելի անդամակներէն:

Հանգիստ վերջացաւ 300 զանգուղի պարգեւով մը որ տրուեցաւ հասակով, գլխով, փորով և ականջով ամենէն գեղեցիկ էջուն որուն անունը անշուշտ ոսկի տառերով պիտի արձանագրուի էջական տարեգրութեան մէջ... որեւէ բարեբարի մը պէս:

Հէլուանի մէջ մարդիկ կան եղբր որ 300 դուրուշի գումարին ի տես, շատ զղջացած են... մարդ ծնած ըլլալուն:

Ափրիկէի մէջ, զարմանալի է, էջերը մարդերէն առաջ կանցնին կոր, ատոր սպառնալիք ուրբաթ օրուան մրցումը:

* * *

Մրցումէ և մերձեցումէ չի վախճող կին մը, Քլարա Վարս, տը Շիլէ իշխանուհին, Նեղոսի ափերէն կը տեղափոխուի Վոսթորի ափերուն վրայ քովէ ի վեր ունենալով անհրաժեշտ Ռիկո:

Պոլոյ համար événement մը պիտի ըլլայ նախկին իշխանուհին իւզանդական այցելութիւնը:

Հոն ալ պիտի պոլոյցնէ իր չէկ մագերուն ցուքը, խառն աչքերուն ճառագայթները, մերկ պատկերներուն խառնարարները, ճերմակ, փոքրէք թեւերը, բայցայրուած ու վառաշուն համարին լեկորները, վարդագոյն գիրգ մարմինը, և այն ամեն առաւելութիւնները զորս տեսնելու համար ամենքս ալ բիշ շատ torticollis ունեցանք Օրիէլ Պրիսթօյի պատուհանին վեր այնքան շատ անգամ նայելու համար:

Նոր եկած ատենը, Քլարա Վարս, մեզի համար տարօրինակ կիներ էր, վիպասանութեանց կիներ, խառնակներ, եթերական, բայց կամայ կամայ չէր թողնէր նուազեցաւ, իշխանուհին պարզ կին մը եղաւ և Քլարա Վարսը՝ մատամ Ռիկո, ինչ որ տափակութեան summum է... մատամ Ռիկո:

Սմբիկայի մէջ միլիոնատէրի աղջիկ, Պրիսթօյի մէջ իշխանուհի, Բարիլի մէջ սիրող հերոսուհի, բայց Գահիրէի մէջ պարզ կիսաշխարհեան մը ըլլալէ անգին չանցաւ:

Ինչ անկում, կնկան մը համար որ իր վրայ խօսեցնելու կատարութիւնը ունի:

* * *

Մրցումի պատմութեան մը ետքը մերժումի պատմութիւն մը ձեռքի, որ նուազ հետաքրքրական չէ, պիտի տեսնէք:

Ես շատ պիտի խնդայի մարդու մը վրայ եթէ տեսնէի թէ վիճակահանութեան տոմս մը կը գնէ չի վատաւարելու համար և կամ կնկան մը դարպաս ընել կը փորձէ փառաստուր աստակ մը ուտելու տենջանք, ինչպէս պիտի խնդայի մարդու մը վրայ որ նարտ խաղալ ուզէր կեղծի մէջ հաճոյք մը գգալուն համար և կամ թաղական ըլլալու ճիգեր թափէր բանի մը չի խառնուելու խոհեմութիւնը ունենալու համար: Խնդալէ աւելի չպիտի հաւատայի եթէ որեւէ մէկը այդ տեսակ մարդոց գոյութեան վրայ պնդէր:

Բայց երկու օրի օրէն ի վեր մտածելու եղաւ նախ փոխել սկսայ և այսուհետեւ ամեն բանի պիտի կրնամ հաւատալ:

Պարզ խօսիմ, երկուշաբթի օր երեսփոխանական ժողով կար սեւ դղեակին մէջ: Գաղի, ներկայ, յայտ, գիտէք ինչու — մորեքնուդ չանցնիր — պարզապէս ներս չառնուելու համար:

Կեղան հաճոյքն է որ ժողովարանին դրան առջեւ փնտռեցի և, կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով մուտքս հասայ:

—Lasciate ogni speranza voi che volete entrare:

Հարսանեկան նշանակեցի պէս, մուտքը արգիւտած էր ժողովարանին. պատուէրը դիւանէն կուգար. հետեւաբար ուրիշ բան չէր մնար ինձի, բայց եթէ առեւել քալել, սա համազումը գոյացնելով թէ Պոլիս, Մանիսա, Վան, Մուշ, Զաքէ, Կաթակ, Բարբը, Քիլի, Խնուս, ամեն տեղ վերջապէս, երեսփոխանական ժողովի մը դուռը բաց կըլլայ, իսկ Եգիպտոսինը գոյ... մէջը շատ բայ բաներ գտնուելուն համար կերելի:

Սպասելով որ երէկի նիստին մէջ յուզուած կարեւոր խնդիրներուն ելքը ծանուցանենք մեր ընկերացիներուն, առ այժմ սա կրնանք յայտարար:

Ինչ — թէն տարիայ մեծ հաճոյք կը պատճառէ մեզի — թէ երկուշաբթի օրուան ժողովքը եթէ բանի մըն ալ չի ծառայէ գոնէ նպատաւով պիտի ըլլայ Վոսթոր, զարանի անդուլաներու մաքրուելուն, ինչ որ ամեն օր չի սրտաւիր:

Երեսփոխանական ժողով գումարել՝ անդուլաները լուսար համար, բարեշրջում մըն է սա որ մեծ պատիւ կը բերէ մեր պատուական ներկայացուցիչներու գործունէութեան:

* * *

Եկող տարի այդ ծանծրութիւնը ստանձնելու հարկին մէջ չպիտի գանուին եթէ հատուանք Ջուրից երական թերթերուն որոնք ստուգապէս կը հաստատեն թէ եկող տարի աշխարհը պիտի կործանի:

Եւ կարծենք թէ այդ կործանումը նկատի առնելով է որ մեր Ընդհանուր ժողովը անգործադրելի որոշումներ տուած է իր երէկի նիստին մէջ:

Կեանքի այս միտքնալուծութիւնը քիչ մը վտանգաւոր համար ես կարծեմ թէ երկրագունդիս տալիս վրայութիւնը բաղձալէ դատ ուրիշ ծանրայ չի կայ:

Այն ատեն թերեւս կարելի ըլլայ տեսնել Ադրիանի թագականներուն վախճանութիւնը և Գահիրէի Քաղաքականին անմահութեան վախճանը:

* * *

Եւ պէտք է որ աշխարհը կործանի եթէ Ս. Գրոց նայելու ըլլանք:

Մարդոց մեղքերը ալ չափը կանցնին կոր: Ո՛ւր խուած է, ըսէք, երեսայէ մը ընտրել իր սիրող ժամադրաւոր մը:

Սակայն ինձի կը փառահալանք թէ Թաւուզը, Թուցի հայուստ լոյս քիչ մը ծերուկ քրիստոնեայ մը իր անբաժանելիութիւն հետ ժամադրութիւն տուած է Գեթսեմանի պարտէզին մէջ:

Երեսայէ մը նկատել իբրեւ Մուլէն Ռուս մը, Քաղիմօ քր Քալի մը և կամ որ և է տեղ մը ուր անկանոն սէրեր կապաստանին, ո՛հ, տարիայ սրբապաշտութիւն մըն է որուն վրայ զրեւ իսկ մեղք կը համարենք:

Այլապէս ինչպիսիք երեսայէ մը տեսէք ինչի՞ կը վերածեն կոր: Չէ՛, սա ատանկ չի կրնար շարունակել, պէտք է որ կործանենք գոնէ եկող տարի ալ անդուլները լուսար տալու հարկէն ազատելու համար սեւ դղեակին սպառնալիքը:

Յ. Ա.

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Վերջի հեռագիրները շատ լարուած կը ցուցնեն Միացեալ Նահանգներու և Սպանիոյ յարաբերութիւնները: Երկար առնելէ ի վեր Քուպայի ապստամբութիւնով թխտուած և Մէյն զորահաւորին պայթուածով ամրացած այս ատեւութիւնը հիմա իր գաղաթնակէտին հասած է:

Սպանիոյ մէջ հայրենասիրական ահաբիւն շարժում մը յառաջ կուգայ: Շատեր իրենց

մէկ օրուան շահը տալու մտադրութիւն կը ցուցնեն հանգանակութիւնով զրահաւոր մը գնելու համար։ Մատրիտի արքեպիսկոպոսին նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուած է այդ հանգանակութեան համար։

Ասկէջ զատ, թատերական ներկայացումներ կը կազմակերպուին միեւնոյն նպատակով։ Վիլլամէթօր մարքիզը մինչեւ 250,000 ֆրանք տուած է թէպէտ Բուսետի մէկ օթեակին համար։ Ֆիլիպեան կղզիներու հրամանատար Բրիմս տէ Բիլէրա զօրավարը 100,000 ֆրանք հանգանակած է։ Սպանիական գաղթական նութիւնները կը նպաստեն այդ հայրենասիրական նպատակին և ծովային նախարարը արգէն ահագին գումարներ ստացած է Արժանթինի և Մէքսիկայի հասարակապետութիւններէն։

Սպանիական մամուլը սա որոշումը կը յայտնէ թէ, կառավարութիւնն ու ժողովուրդը որոշած են ընդդիմանալ Միացեալ Նահանգներու Քուսպի խնդիրներուն միջամտութեան, անոր ծախուելուն և Մէյնի պայթումին համար ուէ տուգանք վճարելու։

Կիոյս, Սպանիոյ պաշտօնական թերթը, կը յայտարարէ թէ Միացեալ Նահանգները իրենց փառասիրութեան դիմակը կը հանեն այն պահուն ուր Սպանիացւոյ յաշտութիւնները Գուալայի խնդրոյն վերջը գուշակել կուտային։

«Եթէ պէտք է պատերազմիլ, կըսէ Թիեմքո լրագիրը, պիտի պատերազմինք որովհետեւ մենք այնքան տկար չենք որ չկրնանք ցուցունել ամբողջ աշխարհի թէ ինչպէս կը կռուի այս ժողովուրդը իր իրաւունքին համար։»

Կը հաւատեն թէ Պ. Ուտֆօրտ, Սպանիոյ ամերիկեան դեսպանը, հրահանգ ստացած է մեկնիլ պատրաստուելու։

Միւս կողմէն Միացեալ Նահանգները փութով առաջ կը տանին իրենց պատերազմական պատրաստութիւնները։

—Տէյլի Նիուզի Կ. Պոլսոյ թղթակիցը կիմանայ թէ ութ հայեր որոնք վերջերս մահուան դատապարտուած էին կախաղան հանուեր են։

Եւրոպական ուրիշ ոչ մէկ թերթ արձագանգ տուած չըլլալով այս անակնկալ ու ցաւառիթ լուրին, վերապահութեամբ կը հրատարակենք զայն։

Ուրիշ երեսուն երկու հայեր՝ որոնց չորսը քահանայ՝ Մէրսինէն Կ. Պոլիս տարուելով բանտարկուեր են։

—Դուռը մեծ տէրութեանց երեքին կողմէ մերժողական պատասխան ստացել է իր այն չըջարեականին որով Քարաթէոտորի փաշան Կրէտէի կառավարչութեան ընտրելի կը ներկայացնէր։

—Սեւ ծովի ռուսական նաւատորմին ընդհ. հրամանատար Իօրիլօֆ ծովակալը հրաժարել է այն ծանր զեղծումներուն պատճառով որոնք գտնուեր են Սեփաստափոյի ծովային պաշտօնէութեան մէջ։ Հարիւր սպայէ աւելի ձերբակալուած են և անոնցմէ հինգը անձնասպան եղած։

—Չինացի բարձր անձնաւորութիւն մը պաշտօնագիր մը ուղղելով կայսեր, ամբաստանած է Լի-Հունկ-Չանկը իբր կաշառակեր

Յիշեալ պաշտօնատարը կը պնդէ թէ Լի-Հունկ Չանկ 1,500,000 ռուբլի կաշառք կերած է Ռուս կառավարութենէն։ Եւ ասոր համար քննութիւն մը բանալ կառաւարկէ՝ իր գլուխը վրայ տալ յանձն առնելով եթէ չկրնայ իր ամբաստանութիւնը փաստերով հաստատել։

—Նորագոյն հեռագրի մը նպելով, Սպանիա և Միացեալ Նահանգները կընդունին Պապին միջամտութիւնը։

—Ռուս թերթերը կը հայտնեն թէ Գանձակի Նահանգը բնակող 6000 իսլամ ընտանիքներ թուրք կառավարութեան դիմելով արտօնութիւն խնդրած են Տաճկաստան գաղթելու։ Դրան և Ռուսիոյ Արտաքին գործոց նախարարութեան միջեւ լսանակցութիւններ կը կատարուին այս նպատակաւ։ Այդ թուրք գաղթականներ պիտի հաստատուին եղբր Փոքր Ասիոյ զանազան կողմերը, և գլխաւորապէս Սեբաստիոյ Նահանգը։

—Կ. Պոլսոյ գրաքննութիւնը արգիլել է հայերէն թերթերու՝ ուէ բան չի գրել Կիլիկիոյ կաթողիկոսական խնդրին վրայ։

—Թունուզի մէջ նորէն հակահրէական շփոթութիւններ տեղի ունեցել են անցեալ ամսոյ 25ին և 26ին։ Հրեաներու պատկանող շատ մը խանութներ կողոպտուել են։ Տոյցը շարունակուելու վրայ է և ոստիկանութիւնը դժուարութիւններ կը կրէ վերջ մը գնելու համար այս խառնաշփոթութեանց որոնց միջոցին վիրաւորեալներ ու մեռածներ գտնուած են։ Թունուզի պէյին թարգմանը որ հրեայ մըն է վիրաւորուածներուն մէջ կը գտնուի։

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ԴԱՐՁԵԱԼ ԶՕԼԱ

—Ուրեմն արդարութիւնը քոյրո՞ւյին անհետացած չէ եղեր Ֆրանսայէն, այն հանրապետական երկրէն ուր միապետական ճընշումներ գործուեցան՝ իրենց անհետէն բիրտ ձեռքի սակ՝ Զօրայի դասին առիւ։

Այս կամ ասոր մօտ մեծածում մը ունեցան անշուշտ մեծանուն վիպասանին համակրողները, աշխարհի ամեն կողմը, երբ Բարիզէն հեռագիրը հաղորդեց կիրակի իրիկուն, թէ «Վճռաբեկ ասեանք ջնջած է եղեռնադատ ասեանք վճիռը»։ Այս քեկանում անակնկալ մըն է ո՛չ միայն Զօրայի հակառակորդներուն, այլ նոյն իսկ իրեն ու իրեններուն համար, այնքան վերցած էր հաւասքը Ֆրանսայի դասական իշխանութեանց անկողմնակալութեան վրայէն։

Գերագոյն ասեանք ասոր հակառակը կապացուցանէ. Զօրան դասապարտոյ վճիռը սպօրիկաւոր գաւ, որովհետեւ օրինական թերութիւն կայ. փաստաւրարութեան դասք պէ՛տք էր բացուած ըլլար պատերազմական խորհուրդին կողմէ, եւ ո՛չ թէ պատերազմական նախարարին կողմէ. յետոյ, դասաւարտութեան միջոցին, վկաներու հարցաֆննդութեան մէջ, նախագահը խօսք զրացած էր ամբաստանեալի փաստաբանին. հիշանդ կին մը, որ իր զան մէջ պիտի հարցաֆննդուէր, օրինական երդումը ամբողջովն չէ կատարած։

Դիւրին է երեւակայել այն մեծ յու-

զումը զոր Ֆրանսայի մէջ առաջ բերած է վճռաբեկին որոշումը, մանաւանդ այնպիսի ձեւի մը սակ որ դասք չի յղուիր երդուեալներու նոր ասեանի մը առջեւ, այլ պէ՛տք է որ կառավարութիւնը նորէն դաս բանալ։ Երեւոյթական ընտրութեանց հրահայտներուն մէջ այս փառութիւնը պիտի ունենա՞ն նախարարները։ Պ. Մէյլին յայտարարէր է խորհրդարանին մէջ թէ պատերազմական խորհուրդը պիտի մեծածէ ասոր վրայ։

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԵՐԵՎԱՆԻԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ՆԻՍՏԸ

Երեւոյթութիւնը ազգ. երեսփոխանական ժողովը իր տարեկան նիստը ըրաւ այս երկուշաբթի իրիկուն, Առաջնորդարանի մէջ, ատեն նապետութեամբ Տիգրան փաշայի։ Կը նախագահէր առաջնորդական Տեղապահ Տ. Յակոբ Մ. Վ. Այոտ և ներկայ էին պաշտօնի վրայ գտնուող բոլոր երեսփոխանը։

Ատենան բացուելուն՝ Տեղապահ Հայրը խօսք առնելով իր տասնամեայ պաշտօնավարութեան վրայ տեղեկութիւններ տուաւ, մասնաւորապէս մատնանիշ ընելով նորահաստատ կանոնադրութեան գործադրութեան մէջ տեսնուած դժուարին կէտերը, և անոնց մասին բարեփոխումներ առաջարկելով Յետոյ ժողովին ուղղութիւնը հրահրեց առաջնորդի մը ընտրութեան պէտքին վրայ։

Ժողովն անցնելով օրակարգի առաջին խնդրոյն որ էր արգէն «Առաջնորդական ընտրութիւն», երկար խորհրդակցութիւններ կատարեց որմէ ետքը միաձայնութեամբ Եգիպտոսի առաջնորդ ընտրեց իր նախկին առաջնորդ ու նախորդ Պատրիարք Ամեն. Իզմիրլեան Սրբազանը։

Այս ընտրութենէ ետք, ժողովը նկատողութեան առնելով այն պատահականութիւնը, յորում Դուռը չի վաւերացունէ այս ընտրութիւնը և Իզմիրլեան Սրբազան չարածուի հեռանալ Երուսաղէմի վանքէն, ուր կը գտնուի, այդ պարագային համար երկրորդ ընտրելի նշանակեց Տ. Յովսէփ Մ. Վ. Այվազեանը։

Թէեւ դիտել տուողներ եղան թէ Այվազեան վարդապետը ասկէջ մէկ ամիս առաջ Ռոստոմօյի Առաջնորդ ընտրուած ու պաշտօնը կառավարութեան կողմէ վաւերացուած ըլլալով՝ այս պահուս իր պաշտօնավարը ուղեւորած ըլլալու է արգէն, և ուրիշներ աւարկեցին թէ յիշեալ վարդապետին հովուական գործունէութիւնը պէտք եղածին չափ ծանօթ չէ Եգիպտոսի ազգայնոց, սակայն դիւանին կողմէ եղած յայտարարութեան վրայ, համակերպեցան։

Առաջնորդական ընտրութենէն առաջ երեսփոխաններէն մէկը առաջարկեց որ նկատողութեան առնուի Եգիպտոսեան Արաբկիրցի ազգայիններու կողմէ 250 ստորագրութեամբ ներկայացուած հանրագիրը որ փափաք կը յայտնէ առաջնորդ ունենալ Տ. Եղնիկ Եպիսկոպոսը։ Այս առաջարկութիւն անհետեւանք մնաց։

Կատարուած ընտրութիւնները Ազգ. Պատրիարքարանին տեղեկագրուելով հանդերձ, մի և նոյն ատեն պիտի գրուի Ազգայնագրի

թաղական խորհուրդին որպէս զի հրաժարի իր այն առարկութենէն որով չուզեր մասնակցիլ առաջնորդի թաղական վճարման:

Ժողովը բաւական համարելով այսքան աշխատութիւնը իր սոյն նիստին համար որ տեւեց մէկ ու կէս ժամ, որոշեց յաջորդ իրիկունը (երեքշաբթի) վերստին գումարիլ և զբաղիլ օրակարգի յաջորդ խնդիրներով որոնք կը վերաբերին Գաղաքական Ժողովին հաշիւներուն և 1898ի ելմտացոյցին:

Այս երկրորդ նիստին վերաբերմամբ ունէ տեղեկութիւն չի հաղորդուեցաւ խմբագրութեան:

Ն Ո Ւ Պ Ա Ր Փ Ա Շ Ա

Ցաւօք կիմանանք թէ Բարձր. Նուպար փաշա, որ իր վերջին հիւանդութենէն կատարելապէս բժշկուած էր, վերստին հիւանդացեր է՝ այս անգամ աւելի մտահոգութիւն պատճառելով: Պօղոս փաշա Նուպար յուռաշիկայ շաբաթ ընտանեօք Բարիզ կուղևորի իր մեծանուն հօր քով գտնուելու համար:

Նովոյե Վրէնիա ռուսական թերթին Պագուէն առած մէկ հեռագրին համաձայն, Մանթաշօֆ և ընկ. տունը իրենց քարիւղի գործը, որուն արժէքը 23 միլիոն ռուպլի կը հաշուուի, ծախեր են անգլիացիի մը:

Թէեւ այս լուրը Պոլսոյ ազգային թերթերն ալ տուին, բայց մինչեւ այսօր ստուգութիւն չէ գտած բարեբաղդաբար:

Ռէիդեան կարապետ պէյի բաղնիքի բարեկամները ուրախ պիտի ըլլան խանաթի թէ Խառն Դատարանաց այդ յարգելի անդամը ապաքինելու վրայ է այն հիւանդութենէն որով վերջերս անկողին ինկած էր:

Հազիւ ամիսը բոլորուած՝ երկրորդ անձնասպանութիւն մը ծանուցանելու տխուր հարկին մէջ կը գտնուինք: Տխար Առաքել Այճեան, Բարեգործական ընկերութեան տնօրէններէն մէկը, նախընթաց օր ինքզինքը Նեղոս գետը նետելով վերջ տուաւ իր կեանքին:

Տարէց անձ մըն էր, բարեկիրթ, և պարկեշտ աշխատասէր:

Այս յուսահատական արարքը կը վերագրուի մտային խանգարման մը:

Յուզարկաւորութիւնը՝ ըստ մեր եկեղեցւոյ սուգորութեան, կատարուեցաւ միայն մէկ քահանայով. խուփ մը բարեկամներ կը հետեւէին դագաղին:

ՏԻԱՐ ԱՌԱՔԵԼ ՊԵՐՊԵՐԵԱՆ իբրեւ մտերիմ բարեկամ ՏԻԱՐ ԱՌԱՔԵԼ ԱՅՃԵԱՆԻ և իբրեւ Ատենապետ Բարեգործական ընկերութեան, իր շնորհակալութիւնները կը ներկայացնէ ամեն անոնց որ ներկայ գտնուելով հանգուցելոյն յուզարկաւորութեան, վերջին յարգանք մը նուիրել ուզեցին տարաբաղդ Այճեանի յիշատակին:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Բարձ. Խտիվին եղբայրը՝ բռնա Մուհամմէտ Ալի փաշա երէկ առտու մասնաւոր կառախումբով Աղեքսանդրիա գնաց՝ և կէս օրէն ետքը, իտալական չոգենաւով մեկնեցաւ Եւրոպա:

Ճիտութեւն առողջապահական ժողովին հասած հեռագիրները թէեւ ժանտախտէ բըռ-

նուողներուն թիւը չեն ցուցունք այլ ևս, սակայն երէկի հեռագիրներէն կիմացուի թէ տիրող հիւանդութենէն մէկ հոգի մեռեր է երկուշաբթի օր:

Այսօր հեղինական անկախութեան տարեդարձին առթիւ, դոհարանական աղօթքներ կարգացուեցան Համգաւուի յունական եկեղեցւոյն մէջ:

Երկուշաբթի օր գումարուած նախաւարաց խորհուրդը վաւերացուցած է Առողջապահական ժողովին 98ի ելմտացոյցը:

Եգիպտական կառավարութիւնը արտօնած է Մահմէդին հետեւող պաշտօնէից իրենց հետ տանիլ ընտանիքներն, պայմանաւ որ ամբողջ կարաւանը 31 հոգիէ աւելի չըլլայ:

Օսմանեան յանձնաժողովը, որ պաշտօնունի Հիճազի մէջ առողջապահական քննութիւն մը բանալու, երէկ Աղեքսանդրիայէն մեկնեցաւ դէպ ի իր պաշտօնավայրը:

Եգիպտական կառավարութեան կողմէ այդ յանձնաժողովին անդամ կարգուած է Տօրթ. Պիթըր:

Պերպէրէն առնուած հեռագրի մը համաձայն այդ քաղաքը ձէնէրէթի միացնող երկաթուղւոյն բացումը տեղի պիտի ունենայ առաջիկայ երկուշաբթի:

Երեք հարիւր թուրք ուխտաւորներ կիրակի օր Աղեքսանդրիա հասան ռուսական Օրկա չոգենաւով և անմիջապէս մեկնեցան դէպի Հիճազ:

Գահիրէի կեդրոնական բանտին մէջ գտնուող յանցապարտ մը որ շաբթուս մէջ կախուելու դատապարտուած էր, անձնասպան եղած է այս առտու... կառավարութեան՝ ծախքի և ձանձրոյթի տեղի չի տալու համար:

Տիկին Կօկօրտան՝ Ֆրանսական դիւանագիտական գործակալին կինը, ուրբաթ օր Աղեքսանդրիայէն մեկնեցաւ Ռիճիմա-Մարկէրիթա չոգենաւով, ամառուան եղանակը Եւրոպայի մէջ անցնելու համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Միլանի Սեֆօլո լրագիրը անցեալ շաբթու գրուած է իր մէկ յօդուածին պատճառաւ, որուն մէջ Ուսկէթթօ թաղաւորը պաշտպան կը ցուցունէր Պ. Քրիսթի: Այն միջոցին երբ խորհրդարանը հակառակ էր դատի ենթարկել նախորդ նախարարապետը, իբր թէ թագաւորը պաշտօն կանչելով Պ. տի Րուտինին հրամայած ըլլայ անոր ունէ զոհողութեամբ ազատել Քրիսթին:

Պ. Քրիսթի երեսփոխանական ընտրելի ներկայացուցեր է ինքզինքը Բալէրմոյի շրջանակին մէջ և իր բարեկամները կը յուսան թէ պիտի յաջողի:

Ջօլայի նոր վէպը, Բալիզ, ահագին յաջողութիւն գտած է, քանի մը շարաթուան մէջ երկու հարիւր հազար օրինակ սպառուով: Այդ հատորով ընտրուող դպրոցին պետը կաւարտէ շաբթը այն երբեակ վէպերուն որոնց առաջին երկուքը կը կազմեն Լուքսը և Հոռը:

Հետզհետէ հաստատութիւն կը գտնէ այն լուր թէ վերջերս ռուսական հողին վրայ, Մուսովիոյ մէկ գիւղին մէջ ձերբակալուած անձն է հուսիսաւոր Հալիւն, Սթամպուլի Սպանիէի, զոր պուլիսի ոստիկանութիւնը շատոնց ի վեր կը փրկէ տընէր: Ինքը կը բողոքէ թէ Պէյրամ կը կոչուի և ընդիմակալութեան է, բայց կատարուած մանրամասն քննութիւններ երեւան կը հանեն իր ինքնութիւնը:

Բարիւնէն կը հաղորդեն թէ մարտ 25ի գիշերը Պրէսթի նուահանգստին մէջ նաւային մար-

զանքներու ատեն Ֆրիան մարտանաւը զարնուեր է Արիէլ թորիլակիր նաւուն որ երկու վայրկեանի մէջ ընկրկուի: Այս արկածին պատճառաւ դիւն-րային մարզանքները պիտի դադրին և երկու նաւերուն հրամանատարները դատի պիտի կոչուին:

Գ. Պոլսոյ զինուորական շրջանակներու մէջ օրուան կարեւոր խնդիրն է Գերմանիայէն բերել տրուած ռազմավերքներուն ուղորմելի վիճակը:

Վերջերս յանձնարարուած Մուզէրեան փամփուշտներուն 0/0ին 40ը անդործածելի են որովհետեւ վրայի պատեանը շուտ մը կը պատուուի և մէջի պարունակութիւնը պարզապէս անպիտան է:

Այսուհետեւ փամփուշտները Աւստրիա պիտի յանձնարարուին:

Նա.—Հոգիս:

Նէ.—Նօնօքիկս:

Նա.—Բեզ համար ունեցած սէքս հաստատելու համար, պատահաւ եմ քեզի տուր քրամս, սիրսս, կեանքս, ամեն ինչ:

Նէ.—Ասոցմէ լաւագոյն բան մը կրնաս տալ եքե ուզես:

Նա.—Ըսէ՛, մի քաւուր, ի՞նչ կուզես:

Նէ.—Սեղանեանքն ժամացոյց մը:

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Աղեքսանդրիա 31 մարտ 1898

Տ.

Պատիւ ունիմ ձեզ ծանուցանելու թէ, գլխաւորող (commanditaire) ընկերոջ մը հետ, յանձնարարութեան, ներկայացուցչութեան տուն մը հաստատուած եմ հրապարակաւ վրայ

Մ. ԹԵԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

անուան տակ:

Եգիպտական հրապարակին պէտքերուն և արտադրութիւններուն վրայ ունեցած խորին ծանօթութիւնս կը ներէ ինձ ձեզ տպագրութեան թէ ինձ յանձնուած շտէրը լաւագոյն կերպով պիտի կրնամ պաշտպանել:

Հաճեցէք ուշադիր ըլլալ ի ստորեւ դրուած ըստորագրութեանս և ընդունիլ Տ... յարգանքաց հաւատին:

ՄԻՋՐԱՆ ԹԵԼԵԱՆ

Աղեքսանդրիա, Ստամպուլ փողոց թիւ 52

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Ա. Թ. ՍԵՏԵՃԱՆԻ

Այս անգամ իր լուսանկարչատունը Գ. Պոլսէն փոխադրած է ի Գահիրէ՝ Բասրա վանաւան փողոցը, Գորսօնըի Բարիզիէն փոխ Թիլ Մանրուսայի մէջ ուր խնամօք կը պատրաստուին ամեն մեծութեամբ լուսանկարներ խիստ դիւրամեջելի գներով: 1—5

ԲԻԷՌ ԼՕԹԻ ԶԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բիէռ Լօթի (Թիւրքէն Վօ, իր իսկական անունով), Իսլանսայի ձկնորսին և Լօթիի անուններէն զմայելի վիպագիրը՝ որուն վրայ քանի մը ատենէ ի վեր շատ չէր խօսուեր իր վերջի հատորներուն կրած քիչ մը անհամակիր ընդունելութենէն ի վեր՝ նորէն ինք իրմով կը զբաղեցնէ Բարիզի հասարակութիւնը:

Հակառակ իր Գործին քիչ մը միօրինակ կուլութեան՝ Լօթի միշտ սիրուած հեղինակ մը կը մնայ ամենուն համար իբրեւ Տարաշխարհիկ գրականութեան ամենէն ուժով ներկայացուցիչ: Իր վէպերուն մէջ, մեծ քաղաքներու ճշտող միջնորդութեան դուրս, անոնց տափակ էնթրիկներէն հեռու, ազատ օդը կը ծծէ մարդանասահման ովկիանոսին առողջ արտաշնչումներուն և իր երակներուն մէջ կը զգայ փայլուն

արեւելեան կենդանանար տաքութեան ծաւալելը : Այդ պարզ պատմութիւններու ազդեցութեան տակ մարդ վայրկեան մը ինքզինքը փոխադրուած կը զգայ հին, նախնական ժողովուրդներու ծոցը՝ ուր սէրը իր կոշտ ձեւին տակ միամտութեան ամբողջ հրապոյրները ունի :

Վիպասան ըլլալէ աւելի ճամբորդող մըն է Լօթի : Հազիւ երկու շաբաթ կընէ այս անգամ Բարիզ հաստատուելը և ահա նոր երկիրներ տեսնելու փափաքը դարձեալ կը հեռացընէ զինքը Մեծ Մայրաքաղաքէն՝ որուն խլացնող աղմուկը չյարմարիր իր մենութեան վարժուած ականջներուն : Այս անգամ ճամբորդութեան աղւոր յատակագիծներ ունի բայց չսիրեր որ ուրիշները անոնց վրայ խօսին : Նոյն իսկ իրեն համար չորոշեր անոնց մանրամասնութիւնները : Եթէ իրեն այդ մասին հարցում մը ուղղուի, միշտ սա անփոփոխելի պատասխանը կուտայ .

«Բնաւ հաճոյք մը չպիտի ունենայի գործադրելով այնպիսի յատակագիծ մը որ ամենուն ծանօթ ըլլար առաջուրէն, նոյն իսկ եթէ ես անգամ անոր մանրամասնութիւնները գիտնամ, հրապոյրը կը փախի» :

Այս անգամ ճամբորդութեան երկու ծրարագիր ունի . մէկը՝ Պարսկաստանի ճամբով Աֆղանիստան՝ Պաղտատէ և Գապուլէ անցնելով ու միւսը՝ Հնդկաստանի եզերքները : Չենք գիտեր թէ այս երկուքէն ո՞րը գործադրելու պիտի ձեռնարկէ քն առաջ :

Թէեւ ծովային պաշտօնէութիւնը ուզածին չափ արձակուրդ կուտայ իրեն (որովհետեւ Լօթի նաւային սպայ մըն է միանգամայն) բայց չէ պատահած որ երեք շաբաթէն աւելի Բարիզ անցընէ : Այս անգամ եկած էր հսկելու համար Անթուանի թատրոնին մէջ պատրաստուած իր մէկ թատերախաղը ու մանաւանդ ներկայ գտնուելու համար Արտաքին գործերու նախարար Պ. Հանօթօյի ազդեմից մէջ ընդունուելու հանդէսին որ բացառիկ շահեկանութիւն մը ունէր :

Անմահներուն ամենէն անկանոնը չէ՞ք գտներ Բիէն Լօթին :

Ա. Զ. Դ. — Ի ֆակալա էմանուէլ Թօլիճեանի նորահաստատ խանութին մէջ միշտ պատրաստ կը գտնուի կովի և ոչխարի միս : Թարմութիւն, մաքրութիւն եւ ածառնութիւն : 3—3



ՆՈՐ ՓՈՒՌ
ՀԱՅԿԱՊԱՆ

ՏԱՐՊԵԼ ԿԻՆԵՆԱ ՓՈՂՈՑ

Ա. Զ. Դ.

Ստորագրեալքս պատիւ ունինք ծանուցանելու արգոյ հասարակութեան թէ ամսոյս 1էն սկսեալ գնած ենք Տարպէլ-Կինէնայի Հայկական փառք և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր գործառնութիւնները : Այդ փառքին գործերու եղանակին մէջ խնամատ Բարեկարգութիւններ ներմուծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական ունէ փառքի մը պէս լիւրժի գոհացնել իրենց վստահութեամբ զմեզ պատուող յաճախորդները :

Կը սիրենք յուսով որ պատուական ազգայինք զմեզ պիտի բաշխուին մեր այս ձեռնարկին մէջ :

Ս. Զուրիկեան եւ Նըքար Հացագործեան

ՍԱՓՐԻՉ

ՕՇԱՆՆԷՍ ՊԵՅԼԷՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գահիլէ հաստատուած է և մեծապէս գոհ թուցած իր յաճախորդները, այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթապա էլ Խատրա, թրամուէյի կայարանին դէմ) ամեն գիւրու թիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ մաքրութիւն, արագութիւն ու վայելչութիւն՝ թէ ածիւնան և թէ վարսայարգարութեան մասին :

ՅՕԹՕԿՐԱՖԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻՒՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուն գոհացուցիչ գիններով : Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐԻ 3—10

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՄԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻՍԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով : Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին : Անգլիական և ֆրանսական սքեսիպիլներ : Թարմ հսկային ջուրեր, անուշահոտ քիւնք եւն. Բնական և մանրադիտական քննութիւններ : Դեղորայմա կը յաճախեն հայ և օտարազգի ծանօթ բժիշկներ : Բժշկական ձրի խորհրդածութիւնը տղրատաց համար : 39—50

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱՋԱՏԱՆԻ ՆԱԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԵ՛ արանց և կանանց չափիկներ, չըջազգեստներ, ևն. մաքրութիւն, ճշգրտահաշիւ, և խիստ չափաւոր գին : 10.—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երզրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Յունուար 1898

ԳԱՀԻԷԸՆ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Էքսպրէս		Օմնիպ.		Էքսպրէս		Օմնիպ.		Էքսպրէս	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.
Գահիլէ	մեկ.	4 45	—	—	—	7 30	—	8 15	—	9 30	—	3 30	—	4 45	—	7 15	—	11 —	—
Պէնհա	»	8 —	—	—	—	7 49	—	9 32	—	10 15	—	4 47	—	5 29	—	8 32	—	12 35	—
Թանթա	ժամ.	11 28	—	—	—	8 30	—	10 30	—	10 55	—	5 45	—	6 7	—	9 30	—	1 44	—
	մեկ.	11 48	6 —	—	—	8 34	—	11 15	—	11 —	—	6 26	—	6 11	—	—	—	1 54	—
Տամանհուր	»	3 10	7 34	—	—	9 41	—	12 49	—	11 58	—	7 59	—	7 7	—	—	—	3 51	—
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	—	2 30	—	—	—	1 —	—	9 40	—	8 7	—	—	—	5 50	—

ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅԻ ԳԱՀԻԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Էքսպրէս		Խառն		Օմնիպ.		Էքսպրէս		Օմնիպ.		Էքսպրէս	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	առտ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	—	—	7 15	—	9 —	—	9 20	—	2 30	—	4 15	—	6 15	—	11 —	—
Տամանհուր	»	—	8 6	—	—	8 58	—	10 2	—	12 14	—	4 13	—	5 15	—	8 6	—	1 9	—
Թանթա	ժամ.	—	9 12	—	—	10 28	—	11 —	—	2 39	—	5 43	—	6 10	—	9 40	—	2 56	—
	մեկ.	6 15	9 16	—	—	11 20	—	11 5	—	2 49	—	6 30	—	6 14	—	—	—	3 6	—
Պէնհա	մեկ.	7 18	9 59	—	—	12 23	—	11 46	—	4 43	—	7 33	—	6 52	—	—	—	4 25	—
Գահիլէ	ժամ.	8 30	10 45	—	—	1 35	—	12 30	—	6 25	—	8 45	—	7 35	—	—	—	5 50	—

ԳԱՀԻԷ-ՍԻԷՉ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԷՉ-ԳԱՀԻԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՕՏ		ԵՐԵԿՈՅ		ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՕՏ		ԵՐԵԿՈՅ	
Գահիլէ	մեկ.	11 40	—	7 —	—	Սիւէշ (քարափ)	մեկ.	9 50	—	—	—
Պէնհա	ժամ.	12 28	—	7 48	—	» կայարան	»	—	—	3 30	—
	մեկ.	12 33	—	7 53	—	Խամպիլի	»	Էքսպրէս	—	7 5	—
Ջակադիկ	ժամ.	1 34	—	8 54	—	Ջակադիկ	ժամ.	3 7	—	8 53	—
	մեկ.	1 44	—	9 4	—			մեկ.	3 17	9 3	—
Խամպիլի	մեկ.	3 40	—	1 —	—	Պէնհա	ժամ.	4 13	—	9 47	—
Սիւէշ կայարան	ժամ.	—	—	5 —	—			մեկ.	4 17	9 4	—
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	—	—	Գահիլէ	ժամ.	5 5	—	10 36	—